ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

ՈՐՈՇՈՒՄ N 137

07 ապրիլի 2022 թվական

ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 14-րդ, 15-րդ և 26-րդ կետերի դրույթներով, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար բազալտե խճի» ձեռքբերման գործընթացը կազմակերպելու նպատակով ձևավորել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Դարբինյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝ Կարեն Գրիգորյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Արսեն Գասպարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Սաթենիկ Զաքարյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գնումների համակարգող Կարեն Նալբանդյանին:

3.Հայտարարության և հրավերի տեքստը հաստատելու համար գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2022 թվականի ապրիլի 8-ին, ժամը 12:30-ին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի երաժշտական դպրոցում, Մաղաթյան 6 հասցեով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 07
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 138

12 ապրիլի 2022 թվական

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 351 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N 828-Ն որոշման 2-րդ կետի դրույթներով՝ *որոշում եմ՝*

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Ձերժինսկու փողոց, 7/15 հասցեում գտնվող համայնքային ենթակայության 0,00240 հեկտար մակերեսով (ծածկագիր 08-003-0034-) բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել՝ այն դարձնելով հասարակական կառուցապատման հողամաս:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 351 որոշումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

2022 թվականի ապրիլի 12
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 139

13 ապրիլի 2022 թվական

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, *որոշում եմ՝*

1. 2022 թվականի ապրիլի 24-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքում Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միջոցառման համար ապրանքների գնման նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝
   Հանձնաժողովի նախագահ՝ Գեղամ Գրիգորյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
   Անդամներ՝ Վալերիկ Սահակյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Մարալիկի մշակույթային երիտասարդական կենտրոն>> համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
   Ելենա Ուռումյան -Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկի քաղաքային գրադարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման, հավաքագրման և գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Անժելա Սաղաթելյանին.
   Միջոցառման կազմակերպման և ապրանքների գնման համար հատկացնել 227100 (երկու հարյուր քսանյոթ հազար մեկ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ բյուջեի վարչական մասի 08.2.4.51 դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածից:
3. Մշակել և իմ հաստատմանը ներկայացնել միջոցառման ծրագիրը և ծախսերի նախահաշիվը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

2022 թվականի ապրիլի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 140

13 ապրիլի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար Մարալիկ քաղաքի Երիտասարդական, Թումանյան, Գագարինի փողոցների մայթերի վերանորոգման, Իսահակյան և Զրափի բնակավայրերի փողոցների փոսորակային նորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Մարտիրոս Դարբինյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Նարեկ Նիկոյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Արսեն Գասպարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Անի կոմունալ տնտեսություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Գագիկ Գրիգորյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 141

13 ապրիլի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար հակակարկտային կայանների սպասարկման (ոչ լիցքավորման) ծառայության» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Ղազարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական

Անդամներ՝ Մարտիրոս Դարբինյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Սամվել Ուռուտյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի օգնական

Սերյոժա Չարչողլյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 142

13 ապրիլի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ***որոշում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար մանկական խաղահրապարակների սարքերի» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Նիկոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Գեղամ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Առաքել Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ

Տոնական Գրիգորյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրիկ

Արտեմ Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 143

13ապրիլի 2022 թվական

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերության, 8-րդ կետի, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի կարիքների համար զրուցատաղավարիների» ձեռքբերման նպատակով պատասխանատու ստորաբաժանում սահմանել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝ Նարեկ Նիկոյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի տեղակալ

Անդամներ՝ Գեղամ Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Առաքել Հայրապետյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի ծառայողական ավտոմեքենայի վարորդ

Տոնական Գրիգորյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի էլեկտրիկ

Արտեմ Մանուկյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի աշխատակազմի տնտեսվար:

2.Սույն որոշման 1-ին կետով նախատեսված գնումների կատարման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Կարեն Նալբանդյանին:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 13
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 144

14 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՍՄԻԿ ԳԵՂԱՄԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՀԵՂԻՆԵ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետի, 62-րդ կետի դրույթներով, ***որոշում եմ***՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի բնակիչներ Հասմիկ Գեղամի Մխիթարյանին, Հեղինե Սամվելի Գրիգորյանին պատկանող թիվ 52 հասցեում գտնվող բնակելի տունը վերահասցեավորել Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Անի համայնք Իսահակյան բնակավայր 3-րդ փողոց, թիվ 28 բնակելի տուն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Ա. Գևորգյան

2022 թվականի ապրիլի 14
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության Շիրակիմարզի Անիհամայնք
ՀայաստանիՀանրապետությանՇիրակի մարզ, քաղաքՄարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 145

14 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ՎԱՐԴԳԵՍ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՎԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից երեք ամսյա հետևողական աշխատանքների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ անչափահասներ Վարդգես Մարզպետի Համբարձումյանի (ծնված՝ 07. 01. 2007 թվականին) և Կարինե Մարզպետի Համբարձումյանի (ծնված՝ 02.11.2008 թվականին) մայրը՝ Արփինե Կամոյի Աղաքարյանը (ծնված՝ 18.08.1985 թվականին), խորթ հայրը՝ Դավիթ Վարուժանի Ավետիսյանը (ծնված՝ 12.11.1986 թվականին) և իրենց հետ բնակվող անչափահաս երեխան՝ Հայկանուշ Դավիթի Ավետիսյանը (ծնված՝ 27.02.2015 թվականին) չունեն մշտական բնակվելու կացարան, ներկա պահին բնակվում են Լուսաղբյուր բնակավայրում գտնվող օժանդակ կառույցում, որը ապրելու համար ունի ոչ բավարար պայմաններ, գտնվում է խիստ անմխիթար վիճակում և օժանդակ կառույցի սեփականատերը պահանջում է ազատել նշված տարածքը, որի հետևանքով ընտանիքը կհայտնվի փողոցում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ներկա պահին ընտանիքը չի կարող վերամիավորվել և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 8-ին տրված եզրակացությունը. *որոշում եմ*՝

1. Անչափահասներ Վարդգես Մարզպետի Համբարձումյանը (ծնված՝ 07.01.2007 թվականին) և Կարինե Մարզպետի Համբարձումյանը (ծնված՝ 02.11.2008 թվականին) առայժմ չեն կարող վերամիավորվել ընտանիքի հետ: Նպատակահարմար է նրանց խնամքը և դաստիարակությունը շարունակել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող որևէ հաստատությունում:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար Ա.Գևորգյան

2022 թվականի ապրիլի 14
քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 146

14 ապրիլի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ԱՐՄԵՆ ՄԵՍՐՈՊԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՄԵՍՐՈՊԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԵՏ ՎԵՐԱՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից երեք ամսյա հետևողական աշխատանքների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ անչափահասներ Արմեն Մեսրոպի Մկրտչյանը (ծնված՝ 18.12.2005 թվականին), Անուշ Մեսրոպի Կարապետյանը (ծնված՝ 25.03.2008 թվականին) և Արթուր Մեսրոպի Կարապետյանը (ծնված՝03.12.2012 թվականին) գտնվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում գտնվող երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպող հաստատությունում, իսկ երեխաների մայրը՝ Նարինե Խաչիկի Կարապետյանը (ծնված՝ 06.06.1977 թվականին) և իր երկու երեխաները՝ Արշակ Մեսրոպի Մկրտչյանը (ծնված՝ 28.01.2001 թվականին) և Արտաշես Մեսրոպի Մկրտչյանը (ծնված՝ 12.02.2003 թվականին) ունեն մշտական բնակվելու կացարան, մայրը ունի աշխատանք, ներկա պահին բնակվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի 2-րդ թաղամաս 4-րդ շենք 3-րդ բնակարանում, վարձակալական հիմունքներով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, նպատակահարմար է գտնվում անչափահաս երեխաներին վերամիավորել կենսաբանական մոր և երկու եղբայրների հետ համատեղ բնակվելու և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից 2022 թվականի ապրիլի 8-ին տրված եզրակացությունը. *որոշում եմ՝*

1. Անչափահասներ Արմեն Մեսրոպի Մկրտչյանին (ծնված՝ 18.12.2005 թվականին), Անուշ Մեսրոպի Մկրտչյանին (ծնված՝ 25.03.2008 թվականին) և Արթուր Մեսրոպի Մկրտչյանին (ծնված՝ 03.12.2012 թվականին) վերամիավորել կենսաբանական մոր հետ համատեղ ապրելու համար:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

2022 թվականի ապրիլի 14
քաղաք Մարալիկ